ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
գիտության գծով պրոռեկտոր,
Ֆ-մ.գ.թ., փ.գ.դ., պրոֆեսոր
Պ.Ս. Ավետիսյան _____

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Ժ. 01.07 –«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մասին

Թամարա Արթուրի Անտոնյանի՝ Ժ.01.07 մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի հայցման «Էդվարդ Օլբիի ստեղծագործական մեթոդի տրանսֆորմացիաները» թեմայով ատենախոսությունը ուսումնասիրում է Օլբիի պոետիկայի առանձնահատկությունները՝ ձևավորման, զարգացման և փոխակերպումների ընթացքում:

Ատենախոսությունը հետաքրքրության է արժանի ինչպես ընտրված խնդիրների ամբողջության, այնպես էլ հետազոտության մոտեցումների և մեթոդաբանության տեսանկյունից: Թ.Անտոնյանի ուսումնասիրությունը նվիրված է 20-րդ դարի ամերիկացի ամենահայտնի, սակայն հայ գրականագիտության մեջ քիչ ուսումնասիրված թատերագիրներից մեկին: Սրանով հետազոտության գիտական նորույթը ապահովված է, իսկ արդիականությունը կարող է պայմանավորված լինել առկա բացը լրացնելու միտումով: Սակայն Թ.Անտոնյանի գիտական աշխատանքն ուշագրավ է ոչ միայն և ոչ այնքան այս համատեքստում, այն չի սահմանափակվում նկարագրական մոտեցմամբ:

Սա արտացոլված է աշխատանքի մտածված կառուցվածքում: Ներածության մեջ հիմնավորելով հետազոտության գիտական նորույթը, արդիականությունն ու ուսումնասիրության մեթոդների ընտրությունը, ատենախոսը սահմանում է նաև թատերագրի ստեղծագործական ուղու երեք շրջանների բաժանման տրամաբանությունը՝ համաձայն այն հիմնական առանձնահատկությունների, որոնք ձեռք է բերում Օլբիի թատրոնը իր զարգացման ընթացքում:

Թ.Անտոնյանի ատենախոսությունը նվիրված է հեղինակի ստեղծագործության երեք շրջանների վերլուծությանը և համապատասխանաբար բաժանված է Ներածության, երեք գլուխների, եզրակացությունների և օգտագործված գրականության ցանկի:

Այս տրամաբանությունից ելնելով՝ առաջին գլխում, վերնագրված՝ «Աբսուրդի թատրոնի և ռեալիզմի գեղագիտական սկզբունքների սինթեզը Է.Օլբիի վաղ շրջանի ստեղծագործություններում», ներկայացվում է թատերագրի վաղ շրջանի չորս պիեսների ուսումնասիրությունը Աբսուրդի թատրոնի գեղագիտության համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Աբսուրդի թատրոնի և պոստմոդեռնիզմի գեղագիտական սկզբունքների սինթեզը Է.Օլբիի երկրորդ շրջանի ստեղծագործություններում», կոնկրետ տեքստային նյութի հիման վրա բացահայտում և ներկայացնում է թատերագրի ստեղծագործական սկզբունքների փոփոխությունը, նրա պոետիկայի հարստացումը նոր գեղագիտական հնարներով և պոստմոդեռնիստական աշխարհայացքին հատուկ հեգնական արտացոլմամբ:

Եվ վերջապես, երրորդ գլուխը՝ «Է.Օլբիի երրորդ՝ պոստմոդեռնիստական շրջանի առանձնահատկությունները», ներկայացնում է, թե ինչպես են, երբեմն՝ քայքայիչ պոստմոդեռնիստական հեգնանքը, ինտերտեքստուալ զգայունությունը և դեկոնստրուկցիան գերիշխում թատերագրի ստեղծագործական երրորդ շրջանում: Եզրակացություններում ներկայացված եզրահանգումները ամփոփում են ուսումնասիրությունը: Դրանք հիմնականում վերաբերում են Օլբիի ստեղծագործական մեթոդի սահմանմանը, ստեղծագործական երեք շրջանների բաժանմանը և հեղինակի թատերգության ժանրային և գեղագիտական առանձնահատկությունների վերհանմանը:

Օգտագործված գրականության ցանկը, որը ներառում է 107 անուն, արտացոլում է անհրաժեշտ աղբյուրների իմացությունը և մի քանի լեզուների իմացությունը, որոնք հնարավորություն են տալիս ընկալել բավականին տարաբնույթ գրականագիտական նյութ:

Մեր առջև Է.Օլբիի պոետիկայի խոհուն, հստակ կազմված հայեցակարգային ներկայացումն է, դրա հիմնական հատկանիշների, ատենախոսի կողմից բացահայտած փուլերի և դրանց զարգացման դինամիկայի վերլուծությունը՝ ամենալայն և երբեմն անսպասելի համատեքստում:

Հետազոտող համոզիչ ապացուցում է Է.Օլբիի կապը ոչ միայն Աբսուրդի թատրոնի, այլ նաև ավելի ուշ զարգացած և որոշակի առումով ավելի ողողուն պոստմոդեռնիստական գեղագիտության հետ՝ առանձնացնելով թատերագրի ստեղծագործության այն

հատկնիշներն ու հնարները, որոնք թույլ են տալիս նրա ստեղծագործական մեթոդը սահմանել՝ ***սինթետիկ:*** Հատկանշական է, որ աշխատանքում ներկայացվում է ոչ միայն Է.Օլբիի թատերգության նմանությունը Աբսուրդի թատրոնի ֆրանսիական ավանդույթին, այլ նաև տարբերությունը դրանից:

Աբսուրդիստների հետ Է.Օլբիի պոետիկայի նմանության մասին նախկինում խոսվել է, այդ թվում՝ Աբսուրդի թատրոնի այնպիսի առաջատար տեսաբանների կողմից, ինչպիսին Մ. Էսլինը և այլոք են: Հետաքրքրության արժանի հետազոտություններ կան նաև թատերագրի ստեղծագործության մեջ պոտմոդեռնիստական տարրերի առկայության, հեղինակի ստեղծագործության վրա պոստմոդեռնիզմի աճող ազդեցության, ինչպես նաև նրա ստեղծագործական մեթոդի մեջ պոստմոդեռնիստական գեղագիտության ներդրման մասին: Սակայն Թ.Անտոնյանի աշխատանքի կարևորությունը ոչ միայն աբսուրդիստական կամ պոստմոդեռնիստական գեղագիտությանը Օլբիի թատրոնը դասել թույլ տվող այս կամ այն առանձնահատկությունների վերհանումն է, այլ այն, որ ատենախոսը հետևում է Օլբիի ստեղծագործության զարգացման տրամաբանությանը և այդ տրամաբանության ներքո նրա պոետիկայի տրանսֆորմացիաներին:

Իհարկե աշխատանքը զուրկ չէ նաև որոշ թերություններից:

Չնայած ուսումնասիրության բավարար մանրակրկիտությանը, մենք ցանկանում ենք որոշ դիտողություններ անել ատենախոսին.

1. Աշխատանքը զարմանալիորեն լռում է Վ.Սարոյանի՝ 20-րդ դարի ամերիկյան թատրոնի ձևավորման և զարգացման հարցում ունեցած ավանդի մասին, չի նշվում նաև այն փաստի մասին, որ Սարոյանը «կանխագործում է Աբսուրդի թատրոնը՝ նկարագրելով ժամանակակից աշխարհի խճճվածությունը և պարադոքսները»[1] և այն, որ «50-60թթ. եվրոպացի թատերագիրները սկսեցին օգտագործել՝ իրենցից երկու տասնամյակ առաջ Սարոյանի օգտագործած հնարներին նման սյուրռեալիստական, էկզիստենցիալիստական և աբսուրդիստական հնարներ»[2], և այլն:

---

[1]David Calonne. William Saroyan. My Real Work Is Being. The University of North Carolina Press, 1983, p. 84.

[2]DickranKouymjian. Introduction to William Saroyan, An Armenian Trilogy, p. 3. См. такжеоценкидругихамериканскихисследователей, такихкак Michael Benedikt, Theatre Experiment: An Anthology of American Plays. New York, Doubleday, 1967, p. 29, НонаБалакянидр.

2. Անվիճելի չէ նաև աշխատանքի մեթոդաբանական հիմքը ի դեմս Ի.Իլյինի, որը ներկայացնում և վերաշարադրում է ստրուկտուրալիստական, պոստստրուկտուրալիստական և պոստմոդեռնիստական տեսության հիմնական գաղափարները, որի փոխարեն կարելի էր օգտագործել հենց տեսաբանների առավել հայտնի աշխատանքները (թեև աշխատանքում օգտագործվում են Բարտի և Դերիդայի որոշ դրույթներ):

3. Տարօրինակ է նաև Մատթևոս Ավետարանչի ներառումը գեղարվեստական գրականության հեղինակների ցանկում:

Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ներկայացված աշխատանքը տպավորում է իր մտածվածությամբ և վերլուծական մոտեցմամբ, լիովին համապատասխանում է ներկայացված պահանջներին և կարող է լինել երաշխավորված հանրային պաշտպանության համար:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի նիստում, գրառում N 3, հուլիսի 12-ին 2023թ.

Ատենախոսության քննարկմանը մասնակցել են բ.գ.թ., դոցենտ Լ.Ս. Մելիքսեթյանը, բ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Մարգարյանը, բ.գ.թ., դոցենտ Ն.Կ. Գոնչար-Խանջյանը, բ.գ.թ. Ա.Ա. Թադևոսյանը, բ.գ.թ. Ռ.Ռ. Նադիրյանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային գրականության և մշակույթի
ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մելիքսեթյան Լ.Ս.

Հաստատում եմ՝
ՀՌՀ գիտքարտուղար
բ.գ.թ.Կասաբաբովա Ռ.Ս.
12.07.2023